



Ազգային
կուլտուրա

[1999]

Ս. ԳԵՏԵՐԲՈԽԻՐԴ,
Ի. Կ. ԱԿՈՐՈՒԴՅԱՆ Տպարան
1890.

Ltn
70

ԱԶՐԱՅԻՆ

4081



Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
Ի. ԱԿՈՐՈԽՈԴՈՎԸ ՏՊԱՐԱՆՈՒ
1890.



І Н В У Г О В

Дозволено цензурою. С.-Петербургъ, 4 января 1890 года.



Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).

28 74

270 - 60

І Н В У Г О В
Дозволено цензурою. С.-Петербургъ, 4 января 1890 года.

Մեծ Հայքի ընմելուց յետոյ նրա մի ամբողջ գաւառ՝ Ախևնիքը չուզեց և նվթարկուել օտարի լծին. արիւնով ու զէնքով պահպանեց նա իր անկախութիւնը Փոքր Առվկասի լեռներում, որ յետոյ կոչուեց և Պարաբաղ։ Եյս գաւառի բնակիչներն արծիւների նման ամրացան իրանց բարձրութիւններում և աննկուն կերպով պաշտպանում էին իրանց հայրենիքը, կրօնն ու լեզուն. սրանց ջանքովն էր, որ փոքրիկ Պարաբաղն սկսեց փայլել իր պառաւ մօր՝ Հայաստանի վաղեմի փառքերով։ Նա ծաղկում էր ու զօրանում՝ հաստատ մնալով իր անկախութիւնի մէջ. ու յուսալի էր, որ Պարաբաղը, արդէն իբրև մի զօրեղ իշխանութիւն, չպիտի բաւականանար իր ժողովը հանգստութիւ-

*

նով ու բաղդաւորութիւնով, այլ հաւաքելով
իր բոլոր ուժերը, պիտի գնար վրէժինդիր
լինելու բարբարոս թշնամիներից իր անար-
դուած հայրենիքի, աւերտւած տաճարների և
եղբայրների կրած տառապանքների համար:

Դայց... բայց կայ մի առած. «Հայի տունը
կամ ինքը հայր կ'քանդի, կամ սատանան էլ
չե կարող քանդել։ Օռուր չեն հայելն այս ա-
ռածը հիւսել։»

Պարաբաղի իշխող մէլիքների մէջ տարա-
ձայնութիւններ ծագեցան. իւրաքանչիւր մէլիք
դադարեց թէ իր հպատակների, թէ Պարա-
բաղի ամբողջութիւնի վրա հոգալուց. նա
մտածում էր միայն որոպայթներ լարել իր աղ-
գակից մէլիքների դէմ։ Օգուտ քաղելով այս
երկպառակութիւններից, հարեան թափառա-
կան թուրքերը յարձակուեցան դեռ մէկի, ապա
միւսի վրա... Եւ մինչեւ անգամ այս դիպուա-
ծում չ'մոռացան թշնամի մէլիքներն իրանց ան-
ձնական հաշիւները. նրանք չ'միացան, որ ըն-
դհանուր ուժով դէմ դնեն թշնամուն, ինչպէս
դէմ էին դնում մի ժամանակ միացած ու հա-

րուածում շատ անգամ աւելի զօրեղ թշնա-
միներին։

Ահա այստեղ հանգաւ Պարաբաղի երջանիկ
աստղը. թուրքերը լրինց իրանց հրօսակիներով
գիւղեն ու քաղաքները և արիւնով հեղեղեցին
բազմաչարչար ու փառաւոր Երցախը...

Ե.

Երևնարգէն մայր էր մտել. Նրեկյեան Աստղն
էլ մօտենում էր Ուշթէփէ բլօին. Հովտի մէջ
թիկն տուած մի քարին՝ նստած էր ծեր հո-
վեւր. նա վաղուց փուլմ էր սրբնգն ու ցրւուած
գառները կամաց-կամաց հաւաքւում էին նրա
շուրջ։ Անացած հովեւներից մէկը խուրջինից
հաց, պանիր էր հանում, իսկ երբորդը գնացել
էր մեծ պղնձով առուից ջուր բերելու։ Արնդի
կլվոցն երեմնապէս ընդհատում էր շների հա-
ջոցը, որոնք կորած գառներին ձանապարհ էին
ցոյց տալիս։ Եյդ ժամանակ արեւելքում կար-
ծես երկինքը կրակուեց. ծագեց բոլորակ լու-

սինն ու շները կատաղի հաջոցով յանկարծակի դէպի մի կողմ արշաւեցին: Հեռու հովտում երեց մի ձիաւոր:

— Աղա Զամալ, Գիւքի, տեսէք էն ովէ, շները կաս չ'տան, ասաց թիկն տուած հովիւր սրինդն ընդհատելով:

Զամալն իսկոյն հետևեց շներին, նրանց զըսպել աշխատելով. Գիւքին նոյնպէս ձանապարհի մէջ տեղը թողեց պղինձն ու վազ տուեց այն կողմ:

— Ե՞յ, ով ես, ուր ես գնում, կանչեց Զամալը կանգնեցնելով ձիաւորին:

Ճանապարհորդը պատասխանեց, որ զնում է Հայլիձոր ու ինդրեց, որ զսպեն շներին:

— Եխպէրջան, զիշեր ժամանակ է, ասաց Գիւքին, Վարաչօրլու թուրքերը կատաղել են, դու մէսակ ես ու հազար մի փորձանք կայ ձամբին. արի՛, էս զիշեր մեղ մօտ անցկացրու, մեր աղուհացը կ'եր, էգուց առաւօտ՝ Վատծու խերին քեզ ճամբա կ'զցենք:

Չիաւորը փոքր ինչ տատանուելուց յետոյ համաձայնեց, նրանք շտապեցին դէպի հօտը:

— Իարի՛ աջողում, չորան-ախապէր, ասաց ձանապարհորդն երլորդ հովեին, որը սպիտակ մազերով բայց գեռ աշխուժ ծեր էր: Աա հովեւների զիշաւորն էր, անունը՝ Թափինի:

— Վատծու բարին, զոնաղ-ախապէր, պատասխանեց հովեւն ու իսկցին վեր թռաւ օգնելու ճամբորդին, որ ձիուց իջնի:

Ճամբորդն իջաւ ձիուց, եափնջին ուսերից ձգեց, փոեց գետնին. ինքը պառկեց նրա վրա գլուխը կրանը յենած՝ ուաքերի մէջ առնելով հրացանը. նրա յոգնած, փրփրուած ձին ման էր ածում Զամալը, իսկ Գիւքին ձանապարհի կիսում թողած պղինձը բերեց ու մի կողմ քաշուած՝ մորթեց գառներից մէկն ու փորոտիքը հանում էր:

Լուսինն արդէն բարձրացել էր լիռներից. գառները հովեւների շուրջ հաւաքուած՝ զիշերուայ ցրտի ազդեցութիւնից՝ երբեմն թափէին տալիս մարմինը, բուրդը բիդ-բիդ կանգնեցնում. շներն էլ հաւաքուել էին Գիւքու շուրջ, նրա մորթելը դիտում, աղքները հաւաքում:

— Ե՞յ զոնաղ-ախապէր, զարձաւ ծերտունի

Թաիւնին ճամբորդին, գեռ բեխերդ նոր են ծլել
երեռւմ է՝ անփորձ ես. ի՞նչ մարդ կ'համար-
ձակուի կէս զիշերին մէնակ ճանապարհորդել
էս անհաւատներից արիւնլուայ արած տեղե-
րում. դու գնում ես կամաց-կամաց, ոչինչ չես էլ
մտածում, բայց քարի տակից, թփի յետեկց
թու լքմէնի գնդակը նշան է գնում կրծքիդ. մի-
թէ քո կեանքն էղքան էժան ես զին դնում,
զոնաղ-ախտպէր: Եւ Թաիւնին հառաշեց ու դար-
ձաւ Թամալին.

— Թամալ, կրակ արա՛:

Թամալը գեանին մի ցից տնկեց, ձին կապեց
վրայից ու ինքը տաշեղներ ու չոր խոտեր հա-
ւաքելով՝ սկսեց կրակ անել:

— Գիտե՞ս, զոնաղ-ախտպէր,—բայց յանկարծ
Թաիւնին կարեց իր խօսքն ու հարցրեց Ճանա-
պարհորդին—անունդ ի՞նչ է:

— Ատեփաննոս Շահումեան, պատասխա-
նեց Ճանապարհորդը:

— Շահումենց հա, իշխանական ցեղեց ես,
գեռ չես ընկել մեր ջղերը-քոլերը... Որդի, ի՞նչ
ասեմ, Լուսաւորչի Վջը վիայ, չորան հմ—ոչխա-

լոտա՛, էսքան ծերացել եմ, բայց գեռ էնքան
մորթած ոչխար չեմ տեսել, ինչքան մարդ:
Շահումեանը լուռ՝ հետեռում էր ոգեղորուած
ծերունուն: «Օհրունին շարունակեց.

— Ել ի՞նչ ասեմ, ոչխար, տաւար փախցել
աներ ու գիւղեր կողոպտել, այլել... Գեռ շատ
չի անցել, երկու ամիս կ'լինի, երկու չորան
ընկերներով արածեցնում էինք մօտագայ գիւղի
Մինսս-աղայի ոչխարները: Գիշերը թուրքերը
վրա տուին: Ե՛հ, ի՞նչ ասեմ, եթէ հինգ, վեց
հոգի են, մի երկուսին դեռ մինչև նրանց մօ-
տենալը կ'գլորես, մնացածին էլ—լաւ գիտես—
եթէ հայի ձեռքը խանչալ լինի, ուր կուղարկի.
մենք էլ—փառք Կատծու—մեր զէնքը մեր
մջքից ցած չենք գցում: Բայց ի՞նչ անես,
եթէ վրա են տալիս քսանը, երեսունը, ոնց
էսքանին ջուղաբ տաս: Ես անգամ վրա տուին
քառասուն թուրք: Ե՛հ, ի՞նչ ասել կուզէ,
որ մեր շնորհը ցցյ տուինք, բայց խանչալի
ուսիս վրա իջած հարուածն աչքերս շշմեց-
րից ու ես ընկայ ու շաթափի: Հետեեալ առա-
ւօտ արեգակն ընկել էր աչքերիս. մի քիչ ուշքի

եկայ, նայեցի չորս բոլորքս—ի՞նչ ոչխար, ի՞նչ
բան. նրանց տեղ դաշտի վրա մի քանի արիւ-
նաթաթախ մարդկանց դիակներ էին ընկած:
Ես ամէն բան յիշեցի: Ուսիս զէրքը վտանգա-
ւոր չէր, միայն շատ թոյլ էի. վերկացայ կա-
մաց-կամաց տեղիցս. եօթը թուկք էր զլորուած,
որոնցից չորսին հրացաններով էինք սպանել
իսկ երկին խանչալներով. ընկերներս էլ ընկած՝
մէկի զլուխն էր կէս արած, միւսինը բոլորովին
մարմնից բաժանուած: Անզնեցի, նայեցի,
նայեցի... ու քայլերս ուղղեցի դէպի գիւղը...
Դու լաց ես լինում, դոնաղ-ախպէր, յանկարծ
դարձաւ նա ճանապարհորդին.

— Ե արունակի՞ր, չորան, ասաց Շահու-
մեանն ու փափախը աչքերին քաշեց, որ ար-
տասուքը չերևայ:

— Գնում եմ գիւղը, որ յայտնեմ Մինաս-
աղային մեր փորձանքը, բայց, ի՞նչ գիւղ, ի՞նչ
բան—կէսը քանդուած, կէսն էրուած. մի շունչ
չկար ամբողջ գիւղում—կէսը կոտորուած էդ
անհաւատ թուրքերից, կէսը փախել էր սարերը...
Եւ լո, դոնաղ-ախպէր, ուր է մի տէր, ասաց նա

խորը հառաչելով: Ըստա նա համեց սրինգն ու
սկսեց տիսուր եղանակով «որբան-խաղն» ածել:
Լուսինն երբեմն դուրս էր գալիս ամպերից,
երբեմն թագնւում էր նրանց յետե: Զամալը
դրեց պղինձը կրակի վրա, իսկ Վիւքին երբեմն
դարան մսի կտորտանքն էր ածում պղինձը,
երբեմն մի ինչոր բանի համար ուշադիւթիւ-
նով շներին էր նայում:

Հներն անհանգիստ էին. նրանք վերէին կե-
նում տեղից, կրկին նստում, մի ինչոր բան հո-
տոտում, երկու քայլ առաջ անում, ապա կրկին
պոչը քաշած՝ իրանց տեղը դառնում:

— Ե Թիւնի, շներին մի մտիկ տուր, դար-
ձաւ նա դէպի ծեր հովեւր:

Թիւնին ընդհատեց սրինգն ու աչքերը դէ-
պի շները դարձրեց. նա իսկոյն որոշեց.

— Երեխ հարամու հոտ են առել դէ Վիւքի,
Ուշթէփէ եւ զգոյշ կաց, նշան արա:

Վիւքին բլի լանջով սկսեց վեր բարձրա-
նալ նա շուտով անյայտացաւ թփերի մէջ:

Ճովիւնելն աչքերն Ուշթէփէ էին դարձրել
որովհետեւ շներն այն կողմէին նայում. Շա-

հումեանը նոյնպէս վերկացաւ տեղեց, հրացանը ձեռքն առնելով. ապա նա ուղղեց կողքեց քարշ արած զարարինան, որը մի քիչ ծռուել էր ու նա էլ այն կողմ սկսեց նայել:

«ուտով հեռու թփերի միջեց լսուեց ուրախ խօսակցութիւն»:

— Հա. սա մեր բարեկամ Ազրային է եղել ասաց Թափնին. դու չե՞ս ճանաչում նրան, դո՞նաղախպէր:

— Եմ ճանաչում, բայց լսել եմ նրա մասին, պատասխանեց Կահումեանը:

Թափնին ու Յամալն էլ վեր թռան տեղերից ու մօտեցան մի հսկոյ ձիաւորի, որը, ինչպէս ենթադրում էր Կահումեանը, «Ազրային» էր լինելու: Հովիւները նրան էլ խնդրում էին զիշերն իրանց մօտ անցկացնել. նա, ինչպէս երեսում էր, համաձայնեց, իջաւ ձիուց ու շուտով բոլորը մօտեցան կրակին:

Կահումեանն առաջին անգամ աչքերն Ազրայիլի վըա դարձրեց ու կրակի լուտով տեսաւ իր առաջ մի ահարկու գէմք. նրա ահազին հաստութիւնով ածուխի պէս սև բեխերի

ծայրերն անհետացել էին խճճուած երկար մօրուքի օղակներում, սև մօրուքը ծածկել էր մինչև անգամ՝ այտերը, հասել մինչեւ աչքի կոպերն ու քիթը. երկար ու խիտ յօնքերը ծածկել էին աչքերի կէսը. զլխն դրած ունէր ահազին սև փափախ. վեզը կարծ էր ու հասա, ուսերը՝ բարձր ու լայն: «Նա իսկոյն գցեց եափնջին»:

— Բարի՛ աջողում, ասաց նա Կահումեանին:

Կահումեանն ապշած՝ մոռացաւ մինչև անգամ պատասխանելու. նա զարմացած նայում էր այդ խափան ապայիլն, որի մասին շատ էր լսել բայց չէր տեսել Այս անսովոր մարդը յայտնի Միթիթար աւազակապետն էր, որ յետք դարձաւ Դաւիթ-բէգի զօրքերի սպարագին:

— Ար, մատաղ, մ' բրես ենել, դարձան նա կրկին Կահումեանին: Ինչպէս մըրեսում էր, նա էլ ճանաչում էր նրան:

— Այս գիշեր, պատասխանեց Կահումեանը:

— Ես Զամբուդր էի, շաբունակեց աւազակապեար, Թորոսն ինձ ասեց, որ զու ուղում

և գնալ ։ ալիձոր Տէր-Աւետիքի մօտ ու ինձ
շատ ցանկանում ես տեսնել:

— Ուրեմն Թռոսուքեղ ամէն բան պատմեց:—
— Պատմեց, պատասխանեց աւազակապետը,
բայց գիտե՞ս, մատաղ դրանից բան չի դուրս
գալ. իրաւ է, դու ինձանից աւելի խելօք ես,
բայց, մինչեւ մեր Վարաբաղե մէլիքներին, քեթ-
խուզաներին կ'միացնես, մի երկու տարի կանցնի.
Էղքան ժամանակում արդէն մի քանի հազար հայ
կ'կոտորեն թուլքերը, բայց — էն էլ նվ գիտէ — էղ-
քան ժամանակից յետոյ կ'միանան ամէնքը թէ
ոչ Ես անպիտան տեղն արիւնով է հոտում,
մարդու գլուխը սոխի գին է բռնել մի՞թէ դեռ
կարելի է սպասել: Երի Ստեփաննոս, էգուց
և եթ Պատաստան անցիր. ես ինքս քեղ հետ
կ'գամ:

— Ես արդէն վճռել եմ, որ էլ ժամանակ
կորցնելու չէ. էցուց և եթ ձանապարհ եմ ընկ-
նելու, բայց դու չես գայ ինձ հետ. դու այս-
տեղ շատ հարկաւոր կ'գաս թուլքերի աւա-
զակութիւններից մի քանիսը զսպելով. բայց
ի՞նչ ես կարծում, Միսիթար, լաւ եմ անում,

որ Պատաստանից եմ մեզ առաջնորդ բե-
լում:

— Ի՞նչ ասեմ, մատաղ, ես կարծում եմ,
լաւ ես անում. մեր մեծամեծները կարծես լայեղ
չեն անում իրանցից մէկին իրանց գլուխ ձա-
նաչել. ասած է՝ «տանու տէրտէրին օրհնեա
տէր չ'կայ». նրանցից ամէն մէկը իրան է մեծ
ձանաչում, իրան համար ապրում: Նէսց էս է
պատճառը, որ մեր ուժը բաժան-բաժան լինե-
լով, թուլքը մեզ հեշտութիւնով տիրեց: Օտար
տեղից եկած մարդու վրա աւելի ակնածու-
թիւնով են նայում, նրա վրա մի քիչ ուրիշ
տեսակ են դատում և եթէ նա արժանաւոր է
ու մանաւանդ՝ իրանց օգտի համար է գործում,
ես կարծում եմ, նրա հետ աւելի շուտով կ'միա-
նան... բայց մի բան էլ կայ, Ստեփաննոս, մեծ
համարձակութիւնէ օտար տեղից մարդ բերելը,
էդ մարդուն դեռ առաջ շատ լաւ պէտք է ձա-
նաչել:

— Ուղիղ է, Միսիթար, և ես չ'ձանաչուած
մարդուն երբէք չեմ բերի:

Նոռուում լսուեցաւ ձիաների ոտի արոփիւն.

մօտեցան կրկին տասնումեծի ձիաւորներ։ Ալրանք
Մխիթարի ընկեններն էին։

— Ճա, էդ դուք էք, տղերք, ասաց Մխիթարը. դէհ, պատմեցէք, ի՞նչպէս էք, բոլորս էլ սաղ էք, ի՞նչպէս որս արիք...

— Փառք Եստծու, բոլորս էլ սաղ ենք ու լաւ էլ որս ենք արել։ Խսօր խիստ շատ ենք աշխատել, էս անհաւատ թուրքերը շների պէս շատացել են։

— Դէհ, հանգստացէք, հանգստացէք, է-գուց էլի կրթանք որս անելու...

Զիաւորներն իջան ձիերից ու պառկեցան կրակի մօտ։


Լուսինը հասել էր երկնքի մէջ տեղը, սար ու ձոր լրւսաւորում։ Գառները ննջում էին անդորր, շները մորթած զարան փորտիքը լա-փում, իսկ մեր Վարաբաղյի հերոսները եափն-ջների վրա նստած, հրացանները կողքերին, հո-վւական ընթրիքն էին անուշ անում։ Պղնձը քլթքը լթալի կրակից ցած էր բերած, տաք-տաք մսերը ձեռքերով հանում էին նրա միջեց, լա-ւաշի մէջ փաթաթում ու ուտում։ Ընթրիքի

ժամանակ խօսակցութիւնն առօրեայ ձև ստա-
ցաւ ու ամէնից շատ խօսում էր Ձիւնին, Հիւ-
րերին ուտելու ոգեսորում։ Ընթրիքից յետոյ
ամէնքը պառկեցան քնելու։

Գիշերուայ սառը հովը վերկացաւ, ամպերը
խաղացրեց, խոտերը սւսրւացրեց. լուսինն եր-
բիմն երեւում էր, ճպտում, երբեմն թագնուում
էր ամպերում, կարծես հովի հետ հանապներ
էր անում, քնած էր ամէն բան, քնած էին սար,
ձոր, քար, գազան, թռչուն... քնած էին և մեր
Վարաբաղյիք եափնջների մէջ փաթաթուած,
հրացանները գրկած, գլուխը չոր քարի վրա
դրած...

Զէ քնած միայն ծերունի Ձիւնին. Նա իր
ալերը գլուխը կրան վրա յենած՝ նստած է ու
մտածում, խորը մտածում. մտաբերում է նա
Վարաբաղի նախկին, երջանիկ օրերը, մտա-
բերում է նրա փառքը... Վարաբաղ ջան-
Վարաբաղ շնչում են նրա շրթունքները ուր
են քո արծիւ որդիքը, ի՞նչ եղար գու. հոտած
թուրքը ոտնակոխ է անում քո հողը, խմում
է քո որդիկերանց արիւնը, իսկ գու լուռ. ես. ։

Ու նստածէ ծերուկը, խորը մտածում, ծանր
հառաջում, և արցունքները թափում են նրա
խորշոմած այտերի վրայից...



Բ.

Սահնքը ոտի վրա էին, երբ արեկլքում ամ-
պերն ու երկինքը ոսկէ գունով ներկուել էին,
իսկ արեւմտքում Նրուսեակը շոտապում էր սա-
րերի յետեւ: Թափի մէջ անուշ ձայնով երգում
էր բլբուլը, խոտերը ծածկուել էին մարդարտի
ցօղով: Առաւօտի ցուլտը զգալի էր ամէնքին.
Այս Կարաբաղցիք փափախները մինչեւ ականջ-
ներն էին իջեցրել, եափնջներում կոլորւել, դառ-
ները բուրդը ուռցրած՝ կոծում էին ցողաթա-
թախ խոտը, իսկ շներն երբեմն թափ էին գա-
լիս, երբեմն թաթով քիթն ու երեսը քորում:

Պանդից, կաթնից նախաձաշը ոտքի վրա
վերջացնելուց յետոյ՝ աւազակների խումբը ի-
րան հետ արած Կահումեանին՝ բաժանուե-
ցաւ հովիւներից:

— Ե Միկիթար, մեղ չմոռանաս, կանչեց
մականին աւազակապետին յետեւից:

— Չորան, մի վախիր, էլ այսուհետեւ Ուշ-
թէփէյի վրա ոչ մի հայ չկ մեռնելու:

Փոքր ինչ Ճանապարհորդելուց յետոյ՝ Միկի-
թարի հրամանով աւազակներն երկու մասի
բաժանուեցան. մի մասը Ծէյթան—Ծուլնջի
առաջնորդութիւնով յետ գարձաւ հայ գիւղերի
վրա հակելու, իսկ միւս մասը Միկիթարի
առաջնորդութիւնով պիտի Կահումեանին ճա-
նապարհ ձգեր մինչեւ Վարաբաղի սահմանները:

— Տղեկք, գոռաց աւազակապետը իր բա-
ժանուող ընկերներին, Ուշթէփէյից շատ չհե-
ռանաք, ինձ միք սպասի, ես ինքս ձեզ կ'գրտ-
նեմ: Ու երկու խմբերը բաժանուեցան իրարից:

Կահումեաննե Եզրայիլ հետ գնում էր ա-
ռաջ, միւս հինգ աւազակները փոքր ինչ հե-
ռուից հետեւում էին նրանց:

— Իայց տես, մատաղ զգոյշ կացիր, դար-
ձաւ աւազակապետը Կահումեանին: Եռաջին՝
այն մարդը, որին մեղ առաջնորդ պիտի բե-
րես, պիտի հայ լինի, երկրորդ՝ ոչ միայն ա-

նունով հայ, այլ և հոգով ու երսորդ՝ պիտի
խըլք ու քաջ լինի, — յիշի՞ր, որ դու մեծ գործի
սկիզբ ես դնում:

— Ենհոգ կաց, Միսիթար:

— Եկար, գիտեմ, որ խըլք ես է, յարեց
Միսիթարը:

— Բայց լաւ կանես, Միսիթար, ինձ ճա-
նապարհ գցելուց յետոյ գնաս ալիձոր ու տես-
նուես Տէր-Եւետիքի հետ:

— Օ՛, այդ քէշեց անհոգ կաց, գոռաց
հիացած տւազակապետը, բաւական է, որ ձեր
գալը լսի թուրքերի բոլոր գիւղերը տակնու-
վըս կանի:

— Բայց, էլե տեսնես, լաւ կանես:

— Եզրիս վրա, պատասխանեց Միսիթարը:

— Մի բան էլ կայ, Միսիթար: Է հարկէ,
եթէ ես գնամ վրացիների թագաւորի մօտ,
ասեմ, թէ մեզ մի քաջ զօրնվար տուր, որ
նրա առաջնորդութիւնով թուրքերին դուրս
քշենք Պարաբաղց, նա կասի՝ «դու ով ես»
ու դուցէ իմ խօսքերին էլ չ'հաւատայ, ես սակ-
ոլուած պիտի լինեմ նրան ասելու, թէ ինձ

Պարաբաղի հայ իշխաններն են ուղարկել բայց
նա կարող է ինձնից հաստատութիւն պահան-
ջել ահա այս պատճառով հարկաւոր է մի
խնդրաժուղթ պատրաստել մեր իշխանների
անունով ու կնքել նրանց կնիքներով: Եյդ գի-
պուածում ի՞նչ պէտք է անեմ:

— Եյդ արդէն չ'գիտեմ, պատասխանեց
տիսուր ձայնով տւազակապետը:

— Մի հնար կայ, Միսիթար, պէտք է կեղծ
կնիքներ շնել տալ:

— Օ՛, դրանից անհոգ կաց, Ուստա-Պալի,
գարձաւ նա իր ընկերներից մէկին, քո փեշակդ
էսօր մեզ պէտք է գալու:

Ուստա-Պալին մեծ բաւականութիւնով զլուխ
տուեց:

— Ծուտով մենք կ'համենեք, գարձաւ Միսի-
թարը կրկին Ծաշումեանին, Ուստա-Պալինց
գիւղը, էնտեղ կ'ձաշենք, գիշերը անց կ'կաց-
նենք. մինչև միւս առաւօտ, ես կարծում եմ,
կնիքները պատրաստ կ'լինին:

— Միսիթար, ամէն բան լաւ է գնում, Ես-
տուած մեզ յաջողում է:

Աէսօրին նրանք հասան Ուստա-Պալենց զիւ-
ղը գիւղի ժողովուրդը զարմանքով նայում էր
Եզրայիլին ու նրա ընկերներին: Ուստա-Պալին
նրանց իրան տուն տարաւ: Ճաշեց յետոյ
Շահումեանը Պարաբաղի յիսուն հայ մեծա-
մեծների անունով վրացիների: Վախտանգ Օ.
թագաւորին ուղղուած մի խնդրագիր շնուց, որով
հայ մեծամեծները իրը թէ, խնդրում էին Վախ-
տանգին իրանց մի զօրավար ուղարկել թուր-
քերին Պարաբաղց դուրս քշելու համար: Խնդրագիրը յիշուած էր նոյնպէս, որ վրացիների
շահերին շատ յարմար է Պարաբաղի նման մի
հայ դաշնակից տերութիւն ունենալ և այն և
այն: Խնդրագրից յետոյ Շահումեանը զբաղու-
եց կեղծ կնիքների ձեւերը շինելով: Նա Պա-
րաբաղի իշխաններից մի քանիսի անունի ու
ազգի միայն սկզբնատառերն էր գրում, մի քա-
նիսի անունները մականուններով մի քանիսի
էլ ազգ ու անունը ամբողջապէս գրելով: Ազա
ամէնքն Ուստա-Պալու առաջնորդութիւնով
վրացուեցան կնիքները փորագրելով: Անիքները,

պատրաստելուց յետոյ, Շահումեանը զմուռով
խփեց խնդրագրի վերջը:

Գ.

Հետևեալ առաւօտ հիւրերը մնաս բարով
ասացին Ուստա-Պալու կնիքն ու Պալուն էլ
իրանց հետ առնելով դուրս եկան գիւղեց:
Նրանք ձանապարհուէպի հիւսիս-արևմուտք
ուղղեցին: Պարաբաղի բնութիւնը հետզհետէ
փոխում էր, սև, աշալկու լեռները բլրանում
էին, նեղ կրծերը ձորանում, խոր ձորերը հով-
տանում: Լեռնական աղքատ բուսականութիւնը
տեղի էր տալիս հազարերանգ ծաղիներով գու-
գուած շքեղ կանաչին: օդը մեղմանում էր ու
քնքշանում:

Ճամբորդները լուռ՝ արշաւում էին. իւրա-
քանչեւրը նրանցից խորասուզուած էր մտած-
մունքներում և յիրաւի շատ բան կար մտա-
ծելու. այդ աղմկալի օրերում այնքան դէպ-
քեր, այնքան նորութիւններ էին պատահում,

որ նորանոր տպաւորութիւնները յաջորդում
էին միմիանց և իւլաքանչիւլի խելքն ու միտքը
գրաւում:

«ահումեանը թեքուեցաւ թամքի գլխին՝
թուլացնելով սանձը. նրա մոտածութիւնով լի
աչքերը դէս ու դէն էին նայում. կարծես մո-
ռացել էր, թէ ուր է նա և ինչ է անում: »Եր-
րա միտքը թռչում էր հեռու, հեռու...

«Նա յիշում էր իր մանկական խաղերը հա-
սակակիցների հետ. նրա ընկերներն ուրախ, զու-
արթ խաղում էին, իսկ նա հեռու նստած՝ աշ-
խատում էր մտաբերել իր ուսուցիչ-քահանայի
այն օրուայ պատմածը. նրա դեռ մանկական
չհաս զիսում նկարում էին իր հայրների
մեծ անձնաւորութիւնները՝ Արդանը, Վա-
հանը... և թւում էր նրան, թէ ահա հեռուից
կ' գայ իսկոյն այդ հզօր Արդանն ու կ' կանչէ ո-
րոտալի ձայնով. «եղայրներ, հերիք է մեզ տա-
ռապել հերիք է մեզ օտար լծի տակ մնալ,
գնանք, վրէ՛ տ առնենք մեր թշնամիներից մեր
ազգի ու եղայրների փրկութիւնի համար...»:
Բայց ահա անցան մանկութիւնի օրերը. նա

արդէն երիտասարդ է և իր ժամանակի համար
լաւ կրթութիւն է ստացել նա տեսնում է այն
ախտը, որ բռնել է իր հայրենիքը: Ուսուրքերը
հետղհետէ լցնում են իր Արարաբաղն ու պիղծ
ձեռքերը տարածում հայկական սուրբ եկեղե-
ցու վրա... Եշանները չեն գործում, ամէնքը
մտածում են հնարներ միմիանց վայր ձգելու
համար... Ու տեսնում է նա այս բոլորը, զգում
է, բայց չե համարձակւում բան ասելու զիտէ,
որ եթէ մի բան ասի, իսկըն նրան կ' լսեցնեն,
ասելով՝ գու ջահիլ ես, բան չես հասկանում:
յիշում է և այն անհանգիստ, անքուն զիշերը,
իրը նրա զլիսում ծագեցաւ մի մեծ միտք —
կանչել զրսից մի հզօր մարդ, որ կարողանայ իր
շուրջը հաւաքել ազատութիւնի գաւակներին...»

Միիթարի ձայնն ընդհատեց նրա մոտա-
մունքները.

— Արարաբաղի սահմանը, Մտեփաննոս:

«Նրանք կանգնած էին մի բլրի գլխին, որի
տակ ձգւում էր ընդարձակ, կանաչ գաշաավայրը:

— Մտեփաննոս, ես էլ քեզ հետ եմ գալու,
քեզ մէնակ չեմ թողնի:

— Զէ, Միհիթար, հարկաւոր չէ. ևս մանելու եմ Վաստան մէնակ, ծպոռւած, որ ոչ ոք չձանաչի և ևս առիթ ունենում այնաեղի հայզօրավարներին աւելի մօտիկ ձանաչել:

— Դու գիտես, Ստեփաննոս, բայց լաւ չես անում:

— Դու, Միհիթար, այստեղ աւելի պէտք կ'դաս:

— Դէ, գնա՞ս բարով, մատաղ:

— Մնա՞ս բարով, Միհիթար: Նրանք համբուլուեցան,

— Մնա՞ք բարով, ասաց նա և միւսներին ու համբուլուեցաւ բոլորի հետ:

Եւ ձիու գլուխն ուղղեց դէպի դաշտավայրը:
— Ստեփաննոս, եթէ նեղ տեղն ընկնես, անունս տուր...

Հաշումեանը ժպտաց:

— Մի ծիծաղեր, Ստեփաննոս, աղբայիլ թևեր էլ ունի...

Հաշումեանի նժոյգն արդէն իջաւ դաշտավայրը. ոտքերի տակ զգալով փափուկ հարթութիւն՝ նա խրինջաց, նրա ջղերը լարուեցան,

ոտքերն սկսան թեթև շարժուել գլուխն առաջ քաշեց ու յանկարծ արշաւեց:

Երիտասարդը կարծես կպած էր մէջքին:

Դարաբաղի նժոյգը արշաւում էր սարսափելի արագութիւնով. նրան ոչ մի ձիաւոր այս ժամին չէր կարող զսպել բայց երիտասարդը չէր էլ մտածում զսպել: Վերջապէս նրանք անյայտացան մշուշի մէջ...

Եզրայիլը կատարեց իր խօսքը:

— Տղե՛ք, ասաց նա Հահումեանի անյայտանալուց յետոյ, ինձ հետեւեցէք, ու իր ընկերներով սլացաւ նրա յետեից:

Նա հետեւում էր Հահումեանին գիշերցերեկ առանց նրան աչքից կորցնելու ու առանց նրանից նկատուելու և իրաւ, եթէ Հահումեանը նեղ տեղն ընկնէր ու տար Եզրայիլի անունը, նրան կ'տեսնէր իսկոյն իր մօտ նրա կատաղի ընկերներով... Միհիթարը ձանապարհ ձգեց Հահումեանին մինչև Մցիւթ առանց նրանից տեսնուելու և ապա կրկին աննկատ յետ դարձաւ իր հայրենիքը— Դարաբաղ:

Պ.

Նրկու շաբաթ էր, ինչ Շահումեանը Մըց-
խէթումն էր, նա իջել էր մի հայ պառաւի մօտ:
‘Օանօթանալով թէ՛ բարձր, թէ՛ հասարակ
շրջանների հետ, նա անդադար ուսումնասի-
րումէր Վարաստանի գինւորական դրութիւնը
ու մանաւանդ այնտեղի հայ անձնաւորութիւն-
ներին: ‘Նրան պատմում էին, որ թէւ Վար-
աստանդ թագաւորը չի կարող պարծենալ իր
քաջութիւնով, բայց նրա ուսումնասէր ու խե-
լք լինելը յայտնի էր ամէնին: ‘Նրան պատ-
մում էին, որ Վարաստանը թէւ քիչ զօրքեր
ունի, բայց նրանցից սարսափում էն թուլքերը.
Քաջ զօրավարների թւում կային և մի քանի
հայեր, մանաւանդ մէկը՝ խելօք ու անյաղթելի
Դաւիթ-բէզը, որ ծնուած էր Վարաբաղում
ու սնուած Վարաստանում: ‘Նա, ինչպէս երե-
սում էր, շատ ժողովրդականութիւն էր ստացել
մանաւանդ նրա համար, որ, չնայելով իր
բարձր պաշտօնին, մնում էր քրիստոնեայ, այն
ինչ վրացի իշխաններից շատերը ու մինչեւ ան-

գամ թագաւորն իրանց հայրենի ժառանգու-
թիւնի վրա հաստատ մնալու համար՝ փոխում
էին իրանց կրօնն ու մահմեդականութիւն ըն-
դունում:

Պատմում էին, որ Դաւիթ-բէզը փոքրուց
իր ընտանիքի ու շատ ուրիշների հետ մի ինչ որ
մէկիքի առաջնորդութիւնով գաղթել է Վարա-
ստան: Վարացիների թագաւորը նրա ընդունակու-
թիւններն ու քաջութիւնները աեսնելով՝ իրան
մօտեցրեց, շինեց իր զօրքերի զօրավար ու մինչեւ
անգամ բէզութիւն տուեց: Եյդ ժամանակ մէ-
լիքն իր ժողովրդի ու Դաւիթ-բէզի ծնողների
հետ կրկին Վարաբաղ գարձաւ, իսկ նրան թա-
գաւորն իր մօտ պահեց: Քիչ ժամանակից յե-
տոյ Դաւիթ-բէզը լսեց, որ թուրքերը մոր-
թել են նրա ծնողներին ու երգուեց, որ չ'պիտի
մեռնի, մինչև թուրքերից տասնապատիկ վրէժը
չ'հանի...

Շահումեանի ընտանիք կանգնեց Դաւ-
իթ-բէզի վրա, բայց ուզեց գեռ ծանօթա-
նալ նրա հետ ու տեսնել թէ ինչ չափով նա
սիրում է Վարաբաղը:

Ե.

Դաւիթ-բէգն այդ ժամանակ գնացել էր Աօ-
փանառուրի անտառները որսի: Կահումեանը
վճռեց չ'սպասել նրա բարձին, այլ գնաւ ու այդ
բնութիւնի ծոցում ծանօթանալ նրա հետ ու
խօսել առանձնակի: «Նա հագաւ Դարաբաղի
հագուստը, զբնիքերը վրան առաւ, հեծաւ իր
կատաղի ձին ու քշեց դէպի Սօփանառուր: Ի՞այց
նա երկար չ'գնաց—մի քանի ժամ ձանապար-
հորդելուց յետոյ նա տեսաւ Դաւիթ-բէգին:

Դաւիթ-բէգը որսից յետ էր դառնում. նրան
հետեւում էր երկու սայլ գոմեներով լծուած,
որոնց քշում էին վրացի սայլապաններ «Հարա-
լ» կամչելով: Սայլերի վրա դրուած էր նրա
որսը՝ երկու եղջերու, յովազ ու վայրի թրո-
չուններ:

Դաւիթ-բէգը գնում էր նրանցից մի վաթ-
սուն քայլ առաջ դանդաղ կերպով աշխատե-
լով ձին սանձել: «Նա մի քառասնից անցած
տղամարդ էր, բարձրահասակ ու հաստակաղմ:
նրա երկար բեխերի ծայրերը կեռացած՝ ներքեւ

էին իջել, մօրուքն ածելած էր, վրացնակ գլխարկի
տակից երկում էին նրա փոքր ինչ ալեխառն
մազերը, թաւ յօնքերի տակից ածուխի նման
մեւ, թափանցող ու խելօք աչքերը. նրա ձա-
կատի վրա արդէն երկում էին խորշոմներ, ո-
րոնք դէմքին աւելի գաժան կերպարանք էին տա-
լիս: «Նա գնում էր լուռ՝ մէկ ձեռքով սանձը-
րունած, իսկ միւս ձեռքը երկսայրու երախակա-
լին յենած:

«Նա սովորաբար տխուր էր ու շատ քիչ էր
խօսում, որով շատ զանազանեւում էր վրացի-
ներից. նա աւելի շատ մոտածում էր, մտածում
էր և այժմ: Արդեօք ինչի՞ վրա:

«Նրա յետեւից վրացի սայլապանը վրչում
էր իր «Հօրօլօն». նրան դուր չէին գալիս այդ
քունը բերող Հօրօլօն, այդ դանդաղաշարձ գո-
մէնները, նրա ականջին հնչում էին իր հայրե-
նիքի յեռնական, կրակոտ երգերը, նա տեսաւ
իր առաջ անդունդներ թռչող Դարաբաղի
նժոյգները. նա, կարծես նոյն ցնորդների շա-
րունակութիւնի մէջ, տեսաւ մի ձիւոր. հասա-
փափախը, զինավառութիւնը, կրակոտ նժոյգը

նկարեցին նրա առաջ ազատասեր Վարաբաղ-
ցուն. նրան աւելի վառ գյոներով ներկայացաւ
իր հայրենիքը, նրա ներկան, թուրքերի բռնու-
թիւնները... յանկարծ նա յիշեց իր մորթոտած
ծնողներին ու նրա ատամները կատաղի կերպով
կրծացին. նրա կրծքից դուրս թռաւ գաղանի
մի մանչիւն, աչքերը փայլատակեցին բարկու-
թիւնի կրակով ու նա կատաղի կերպով հուպ
տուեց ձեռքին բռնած երախակալը:

Եյդ ժամանակ նրա աչքին ընկաւ նոյն ձիա-
տորը. նա տեսաւ, որ այդ ձիաւորը ցնորդ չէ;
նկատեց, որ նա վաղուց հետեւում էր իրան. և
զանգուն տուեց ձիուն Վաւիթ-բէզը, արշաւեց
ձիաւորի վրա ու կանչեց սպառնալի ձայնով.

— Ո՞վ ես դու:

— Բարեկամ:

Վաւիթ-բէզի ձեռքերը թուլացան. ձիաւորի
արտասանած մի բառում կարծես հնչեց նրա
սորհացած հայրենիքի ձայնը, որը կարծես օդ-
նութիւն էր կանչում. քարեկամ:

‘Նա մեղմ ձայնով հարցրեց ձիաւորին.

— Ո՞րահղացի ես, եղքայլ:

— Վարաբաղցի, պատասխանեց ձիաւորը:
Բայց նա էլ չսպասեց նրա պատասխանին.
նա վաղուց գէմքից, հագուստից ու վերջապէս
արտասանած մի բառից ճանաչեց նրա Վարա-
բաղցի լինելը. նա փաթաթուեցաւ ձիաւորին
և երկար, երկար համբուրւում էին նրանք:

— Ուրիշ ոնցէ մեր Վարաբաղը, հարց-
րեց Վաւիթ-բէզը հրձուանքով:

— Միթէ չգիտես...

— Օ, գիտեմ, գիտեմ, էլ մի ասիր...

Գիւղացիները, որ շշկուած սրանց օտարոտի
հանդիպումից սառած մնացել էին տեղերը, շա-
րունակեցին կրկին ճանապարհը: Մցխէթն ար-
դէն իրեւում էր: Վաւիթ-բէզն իր ընկերի հետ
մօտեցաւ Երագուա գետին. փոքր ինչ լոռւ-
թիւնից յեայ՝ նա հարցրեց իր ուղեկցին.

— Ինչու ես եկել

— Ես եկել եմ քեզ տանելու:

— Ինձ տանելու, ինչու ես ուզում ինձ տա-
նել:

— Ուրիքերին Վարաբաղց դուրս քշելու
համար:

— Թօռէլքերին... ու նրա դէմքը խոժոռեցաւ, աչքերը փայլեցին վազրի, աչքերի նման. նա բարկացած հարցրեց.

— Եսա, ով ես դու:

— Ես Ստեփաննոս Շահումեանն եմ:

— Ինչո՞ւ ես ինձ տանում:

— Որ մեղ առաջնորդես: Հերիք է, դու բաւական ծառայեցիր վրացիներին: Ուղիղ են ասում, որ հայերն օտարների համար լաւ ծառաներ են, իսկ իրանց համար վատ տէրեր: Դու լաւ ծառայ էիր, արի՝ այժմ ու կարգի բերքո հայրենիքի գործերը: Եթէ դու ազնիւմարդ ես, եթէ դու վախկոտ չես ու եղբայրներիդ արիւնը կանչումէ քեզ դու պիտի այստեղ ձգես բոլորը—փառքը, պատիւն ու պիտի զոհես քո անձը հայրենիքի փրկուելուն, եթէ ոչ՝ դու արժանի չես այսուհետեւ Պարաբաղի անունին:

Դրէթէ դեռ պատանի Շահումեանն ասումէր այս բոլորը գողղոջուն ու վրդովուած ձայնով, բայց նրա աչքերը, փայլուն աչքերը ուղղակի նայումէին այն ահարկու մարդուն,

որի լոկ անունը սարսափ էր բերում շատերին:

Դաւիթթ-բէզը լսումէր լրւո. առաջ նա դէմքը խոժոռեց, լսելով Շահումեանի կծու խօսքերը, բայց յետոյ նրա կնծիւները բացուեցան ու նա մեղմ ձայնով հարցրեց երիտասարդին.

— Ուրիմն ուղիւմէք ապստամբել:

— Եյ՛, ուզումենք ապստամբել:

Դաւիթթ-բէզն էլ ոչինչ չհարցրեց ու խորասուզուեց մտածմունքի մէջ. նրանք շարունակումէին իրանց ձանապարհը լրւո: Աերջապէս Դաւիթթ-բէզը զլուխը բարձրացրեց. նրա աչքերը փայլումէին ոգևորութիւնով:

— Լաւ, ես պատրաստ եմ կեանքիս մնացորդը զոհել հայրենիքիս համար. դու ուղիղ ասացիր թէ հայերը լաւ ծառայ են օտարի ու վատ տէր իրանց համար: Ես գալիս եմ:

Երագուա գետը հոսումէր հանդարտ. նրա լայն ու յստակ ալիքները փայլումէին հայերունման: Երեւ մօտենումէր լեռներին:

— Մէլիքներն ի՞նչ են անում, հարցրեց Դաւիթթ-բէզը:

— Նրանցից մի քանիսին տեսել եմ, պատասխանեց Շահումեանը, նրանք համաձայն են մեզ հետ միանալու, միւսներին դեռ չեմ տեսել:

— Եւ հարկաւոր էլ չէ: Խաձ ժողովուրդ է հարկաւոր. ժողովրդի մարդիկ պիտի առաջնորդեն ժողովրդին, և ճանաչում եմ Պարարաղի ազատասէր ժողովուրդը:

— Բայց ի՞նչ ես կարծում, Պաւիթ-բէդ, թագաւորը քեզ կ'թողնի:

— Ես նրան չեմ էլ հարցնի:

— Բայց ի՞նչ կուզէ լինի, նրա համաձայնութիւնով աւելի լաւ կ'լինի. ես դրա համար հոգացել եմ:

— Ի՞նչ ես արել հարցրեց ժպտալով Պաւիթ-բէդը:

— Ես մի խնդիր եմ շինել Պարարաղի հայ մեծամեծների անունով ու ինքել եմ նրանց կեղծ կնիքներով:

— Եւ այդ բոլորը արել ես սուրբ գործի համար, դէհ, կեցցես քաջ Պարարաղի, կանչեց Պաւիթ-բէդը ձեռքը խփելով նրա մէջքին:

ապա նա փաթաթուեց ու հայրական գորով կով համբուրեց Շահումեանի բաց ճակատը: Շահումեանն ամօթիսածութիւնով գլուխը կախ ձգեց:

— Շահումեանն, ասաց Պաւիթ-բէդը խորիմաստ ձայնով, Պարարաղը ազատ է լինելու:

Երեք մօտեցել էր սարերին, վերջալուսով փայլում էր ջինջ ու անամակ երկինքը, փայլում էր յստակ Երագուան, փայլում էին և մեր հերոսների դէմքերն արեի վիրջին լուսով, հայրենիքի փրկուելու յօւսով...

Օքերունի Աշխատանգ Օք յայտնի օրէնսդիր ու պատմաբան թագաւորը չէր բազմած իր պարսկական ճաշակով զարդարուած զահի վրա, այլ զանազան խոնուած թղթերի ու մագաղաթների փոշում զիւմ էր իր տարէզրութիւնները, երբ մտաւ Պաւիթ-բէդն ու ողջունեց թագաւորին:

— Նրանցից մի քանիսին տեսել եմ, պատասխանեց Շահումեանը. Նրանք համաձայն են մեզ հետ միանալու, միւսներին դեռ չեմ տեսել:

— Եւ հարկաւոր էլ չէ: Խնձ ժողովուրդ է հարկաւոր. ժողովողի մարդիկ պիտի առաջնորդեն ժողովողին, ևս ճանաչում եմ՝ արաբացիները ազատահանդիպությունը:

— Բայց ի՞նչ ես կարծում, Պատիթ-բէզ,

— Ես նուան եմ իւ Հայոցին:

— Բայց ինչ կուզէ լինի, նրա համաձայնութիւնով աւելի լաւ կ'լինի. ևս գրա համար հոգացել եմ:

— Ի՞նչ ես արել հարցը եց ժպտալով Պա-
ւիթ-բէդր:

— Ես մի խնդիր եմ շինել Վարաբաղե հայ
մեծամեծների անունով ու կնքել եմ Կամաց
կեղծ կնիքներով:

— Եւ այդ բոլորը արել ես սուրբք գործի
համար, գեհ, կեցցես քաջ Պատարացին, կան-
չեց Պաւելիթ-բէզը ձեռքը խփելով նրա մէջ քին.

ապա նա փաթաթուեց ու հայրական գրու-
վով համբուրեց Ըահումեանի բաց ձակարը:
Ըահումեանն ամօթիսածութիւնով զլուխը
կախ ձգեց:

— Ըահումեան, ասաց Դաւիթ-բէգը խորիմաստ ձայնով, Դաբաբաղը ազատ է լինելու:

Երեւան մօտեցել էր սարերին, վերջալուսով
փայլում էր ջինջ ու անսամպ երկինքը, փայ-
լում էին անտառախիտ լեռները, փայլում էր
յատակ Երագործան, փայլում էին և մեր հերոս-
ների դէմքերն արեի վերջին լուսով, հայրենիքի
փրկուելու յօւսով...

‘Օկրունի Վախտանգ Օյ յայտնի օրէնտղի
ու պատմաբան թագաւորը չէր բազմած իր պար-
սկական ճաշակով զարդարուած գահի վրա, այլ
զանազան խոնուած թղթերի ու մազաղաթների
փոշում զբում էր իր տարէզբութիւնները, երբ
մտաւ ‘Վաւիթ-բէջն ու ողջունեց թագաւորին:

— Օհօ, բէզ, բարով որսից նոր ևս դարձել ասա մի տեսնեմ, ի՞նչ ևս ինձ բերել:

— Երկու եղջերու քեզ փէշքէշ եթէ խընդիրս կ'կատարես:

— Եսա, բէզ, ի՞նչ ևս ուզում:

— Թայլ տուր ինձ, գնամ Պարաբաղ:

— Պարաբաղ, բացականչեց ապշած թագւորը, հապա Վարաստանը:

— Թագաւոր, այժմ աւելի պէտք եմ իմ հայրենիքին, Վարաստանն ապահովէ քեզանով:

— Ի՞զ, ովք քեզ խելքից հանեց...

— Թագաւոր, Պարաբաղի վրա բռնացել են թուրքերը. նրանք անխնայ կերպով կոտորում են հայերին: Հայ մեծամեծները խնդրում են քեզանից, որ նրանց օգնես, այսինքն՝ մի հմտւազորավար տաս, որի առաջնորդութիւնով նրանք դուրս քշեն թուրքերին Պարաբաղից: Նրանց լիազօր դեսպանն ինձ է ընտրել:

— Ո՞վ է այդ դեսպանը, կանչել տուր:

Պաւիթ-բէզը դուրս գնաց ծառանիրից մէկին ուղարկելու Վահումեանի յետերից, իսկ ինքը շուտով յետ դարձաւ:

— Ի՞զ, դարձաւ ախուր ձայնով Վախուանիթ թագաւորը Պաւիթ-բէզին, միթէ իմ աղն ու հացը քեզ դառն թւեցան:

— Թագաւոր, ինչո՞ւ ես այդպէս ասուս, միթէ վես է քեզ Հայաստանի ազատ լինելը:

Թագաւորը լոեց. նա տխուր կերպով զլուկիր կախ ձգեց:

Վահումեանը մտաւ. նա երկու ձեռքով բռնած ունէր խնդրագիրը: Վօտենալով թագաւորի թախտին՝ խորը զլուկ տուեց ու խնդրագիրը յանձնեց Վախտանգին:

Վուտով մտաւ և թարգմանիչը, որ Աւթանդիկ հայ իշխանն էր:

Ընթերցումից յետոյ թագաւորը զլուկիր կախ զցեց ու լուռ՝ մտածում էր, յետոյ նա փոքր ինչ խիստ ձայնով հարցրեց Վահումեանին:

— Ո՞վ ես դու:

— Ես Վահիգաննոս Վահումեանն եմ:

— Խնդրագիրում յիշուած իշխաններից մէկը, լրացրեց Պաւիթ-բէզը:

— Ի՞զին երբ տեսար, դարձաւ թագաւորը կրկին Վահումեանին:

— Այսօր, պատասխանեց Շահումեանը:
— Ինչու ուղղակի ինձ մօտ չ'եկար ու չ'ան-

ձնեցիր այս թուղթը:

Շահումեանը լռեց: Դաւիթթ-բէզը տաքա-
ցաւ:

— Թագաւոր, նա չէր կարող քեզ մօտ գալ,
մինչև իմ համաձայնութիւնս չ'առնէր, եթէ
ես չ'ուզենայի, դու ինձ զօրով էլ զըկէիր, ևս
ոչինչ չէի կարող շնչել իսկ եթէ ես չ'համա-
ձայնէի, նա կ'դիմէր մի ուրիշի, որն ինքը
ցանկանարայդ սուրբ գործի առաջնորդութիւնը,
ապա նա քեզ կ'դիմէր, թողնելու նրան:

Թագաւորն իր փշուած հայեացքը ձգեց
Դաւիթթ-բէզի վրա:

— Դէ գնա, բէդ, Աստուած յաջողութիւն
տայ...

— Թագաւոր, ես չեմ մոռանայ, որ դու
իմ բարերարն ես եղած, բացականչեց Դա-
ւիթթ-բէզն ու չոգեց թագաւորի առաջ; Թագա-
ւորը համբուրեց նրա ձակատը:



ա զիզր ազ և զայզր զիզր զայզր
այսուն բանուալ, Ե ա զայզր զիզր զայզր

Երեք օր էր, ինչ Վախտանգ թագաւորը
պալատից չէր դուրս գալիս: Նա սաստիկ տխուր
էր, տխուր էր մանաւանդ, որ ոչ թէ միայն Դա-
ւիթթ-բէզին էր կորցնում, այլ ուրիշ գեռ շատ
քաջ տղամարդիկ: Այս երեք օրում նրան ներ-
կայացան Վախտանգի ամենաքաջ հայ զինուր-
ներն ու անուանի զօրավարները, նրանք թոյլ-
տութիւն էին ինդրում նրանից միանալ Դա-
ւիթթ-բէզի հետ: Նրան արդէն հրաժարական
էին առուել Բայինդուր, Աւթանդիլ Փանտուր-
Զաքար, Գիօրգի հայ իշխաններն ու շատերը:

Նա զարմանում էր այս մարդկանց վրա, ո-
րոնք թողնելով հանգիստ ու վայելսութիւնով
լի կեանքը՝ հայրենիքի ազատուելու յուսով վա-
ռուած: գնում էին դէմ գնելու կուրծքը ար-
հաւիլքներին ու թնդանօթի ոռումբերին. նա
զարմանում էրու տիբում, որ կորցնում էր նրանց:

Այս երրորդ օրը Դաւիթթ-բէզը պիտի դուրս
գար Վախտանգից իր ընկերներով:

Առաւօտուց Մցիսէթը շարժու մի մէջ էլո Յան-

կարծ երկիրը դղբաց ու չորս հարիւր հայ
ձիաւորներ շըջապատեցին Վախտանգ թագա-
ւորի պալատը:

Թագաւորը դուռս եկաւ պատշգամ:

Նրան տեսնելուն պէս՝ հայ ձիաւորները հրա-
ցանները իջեցրին:

Վախտանգն երբ տեսաւ այդ հայրենիքի
զինւորներին, նրանց զինավառութիւնը, կար-
գապահութիւնը, օգևորուած ու յուսով լի
ճակատները, նրա աչքերը ջրակալեցին:

Նա նայեց նրանց լուռ և ապա խօսեց.

«Աւրիձնե՛ր, այսօր դուք վճռել եք մահը
գերազանց համարել կեանքից ու դրա համար
թողնում եք սիրուն Վախտանը, շտապում
արիւնլուայ հայրենիք... հայրենիքի արժանաւոր
որդիք, դրա համար ևս օրհնում եմ ձեզ:

«Քա՞ջ հայեր, ձեր դէմքերի վրա նկարուած
է բուռն օգևորութիւն, ձեր դէմքերի վրա նկա-
րուած է ձեր յաղթանակի հաւատը—այսքանը
բաւական է.—դուք անյաղթելի կ'մնաք. մեռ-
նէք էլ, յաղթող կ'մեռնէք. բայց, երբ ձեղ ա-
ռաջնորդում է դիւցաղն բէզը, սիրտ առէք

հայեր, աւետում եմ ձեղնձեմիր հայրենիքը ա-
ղատ եք տեսնելու»:

Ձիաւորների շարքերը դղբացին, օգևորուած
ու շարժուած կրծքերից դժւրս թռան ահար-
կու ձայներու մասնաւութիւնը առաջ գալու մասնաւութիւնը:

— Աեցե՛ս թագաւոր, կեցցե՛ս Դաւիթ-
բէդ...

«Աեցե՛ս... Դաւիթ-բէ՛դ...» կրիմնեցին Առի-
կասի լեռները:

«Քաջ հայեր, շարունակեց թագաւորը, սի-
րեցի ես ձեղ դուք գիտեք իմ ուժը—եթէ
պէտք գամ ձեղ գիմեցէք ինձ, բայց դուք էլ
չ'մոռանաք ձեղ սնող Վախտանը. բէ՛դ, չ'մո-
ռանաս քո Վախտանզին...»

Երտասուքը խեղդեց նրա ձայնը. նա էլ չ'կա-
րողացաւ շարունակել: «Դաւիթ-բէ՛դը սանդուխ-
ներից վեր վազեց և ուղղակի փաթաթուեց
նրա վզին. նրանք համբուրւում էին:

Դաւիթ-բէ՛դը կրկին ցած վազեց ու նշան
տուեց:

Եզաւների խումբը գոռաց. «Ֆաս բարով
թագաւոր» ու չորս հարիւր հրացան միաձայն

Ճայթեցին, իսկ լեռները բաղմապատկեցին հրացանների թնդիւնը:

Դաւիթ-բէզն առաջ անցաւ, նրա աջ կողմը բռնեց Շահումեանը:

— Առաջ, գոռաց Դաւիթ-բէզը:

Զիաների սանձերը թոյլ թողնուեցան, աղատների գունդն արշաւեց ահեղ հրամանատարի յետևից...

Պախտանգ թագաւորը պալատի կտուրը բարձրացաւ, որ երկար տեսնի այդ ազատութիւնի զինւորներին:

Խումբը հետզհետէ նրա աչքում փոքրանում էր. նրան ծածկում էր երբեմն ձիաների ոտի տակի փոշին, երբեմն անհետանում:

Փոշին մէկ անգամ էլ նրանց շրջապատեց, մէկ անգամ էլ քամուց քշուեց, բայց այս անգամ այլ չէր երեսում աղատների գունդը...

Թագաւորը սփրթնել էր, նրա աչքերը կարմրել էին. նա գարձաւ գէպի իրան շրջապատող վրացի իշխաններն ու ասաց.

— Վհա ձեզ մարդիկ...

Դաւիթ-բէզն իր զնդովավաղուց արդէն գուրս էր եկել Վահանանի մայրաքաղաքից ու մօտենում էր Գարաբաղին: Ռանապարհին նրանց պատմում էին շատ գիւղացիներ, որ Գարաբաղում ապստամբութիւն կայ, որ հայերը կուռում էն թուրքերի հետ...

Զիաւորները նկատեցին, որ կապուտակ երկինքն այն կողմը, դէպի ուր գնում էին նրանք, հետզհետէ սկսում է մթնանալ կարծես սե-սե ամպեր սպառնում էին այնտեղ խաղաղ երկնքին. Գարաբաղի մժին լեռներն էին նրանք:

Բայց այդ լեռներից որսումի ձայներ էին լսւում, կարծես ամպերը կուռում էին այնտեղ իրար հետ ու նրանց խուլ արձագանքը երբեմն լսւում էր, երբեմն ընդհատում:

Զիաւորներն ու շագրութիւնով սկսան ականջ դնել:

— Կոիւ կայ այնտեղ, ասաց Դաւիթ-բէզը, այդ հրացանների թնդիւններ են, պէտք է շատ պենք:

Զիաներն արագ-արագ ընթանում էին. սե-
սև լեռներն արդէն պարզ էին երևում, նրանք
կարծես կախուած էին երկնքից:

Զիաւորները մտան մի ձոր, որն սկսում էր
հետզհետէ նեղանալ, մթնանալ ու բարձրանա-
լով՝ կորչում էր զանազան պտուտներով. նրան
երկու կողմից պատում էին լերկ, ահարկու-
ժայռեր. ձորի գլխից հոսում էր մի գետակ շա-
ռաջելով ու փրփրալով:

Ե՞ր ձամբորդները լսեցին ձորի խորքից
ձիաների ոտքերի տրոփիւն. յանկարծ մի ան-
տեսանելի կրծից դուրս թռան երկուհարիւրի
շափ ձիաւորներ և սկսան Գաւիթ-բէգի զօր-
քերի կողմ արշաւել. նրանց առաջ ընթանում
էր մի հսկայ ձիաւոր ահազին մերկ սուրը
ձեռքին:

Դա Ազրայիլ աւազակապետն էր...

Այսպիսով առաջին անգամ Ազրայիլը միա-
ցաւ Գաւիթ-բէգի հետ:

Աւազակապետը յայտնեց, որ փոքր ինչ ա-
ռաջ այս ձորի միջում գործ էր ունեցել թռուր-
քերի հետ, որոնք Գաւիթ-բէգի գալու լուրն

առնելով ուղեցել էին նրա ձանապարհը բըռ-
նել. նրանց վրա յանկարծակի յարձակուել էր
ինքն ու յետ վռնտել նրանց բռնած տեղերից:
Աչա, թէ ինչ հրացանների թնդիւններ էին
լսում. Գաւիթ-բէգն իր ուղեկիցներով:
Միսիթարը յանձնեց Գաւիթ-բէգին Ըն-
հէր ամրոցի բանալիները, որն արդէն գրաւել
էր ինքը:

Եւ ահա 1722 թւականին, մայիս ամսուայ
մի սիրուն եեկց Գաւիթ-բէգին ազատներիը
գնդով մօտենում է Ընհէրին:

Սիրուն էր այն երեկոն... Երկն երկնքի բար-
ձրութիւնից քնքշութիւնով նայում էր հայրե-
նիքի զինւոլներին. զէնքերն ու զրահները փայ-
լում էին նրա ձառագայթների տակ. թեթև
քամին շարժում էր հայկական դրօշակը:

Գաւիթ-բէգն ընթանում էր իր գնդի առաջ՝
հեծած ամեցի սև ձին. նրա գլուխը կախ էր
ընկել կրծքի վրա. նա բոլորովին խորասուզուած
էր մտածմունքներում.—քանի՛, քանի՛ տարիներ

էին անցել ինչ նա չէր տեսել իր ծանօթ տեղերը, իր մոյլ ու սիրուն հայրենիքը...»

Նրա յետեից ընթանում էին Վարաստանի հայ իշխաններն երիտասարդ Շահումեանի և Սզբայիլ Միթմարի հետ միասին ու յետոյ հայ գինուորների գունդը: Իոլորի գէմքերի վրա փայլում էր ոգեսրութիւնը, բոլորը զբաղուած էին մի մոքով—շուտով կռւի դուրս կանչել անխիղձ թշնամիներին, շուտով նրանց հետ չափուել ուժերով...

Դէպի ամրոցը, լսուեցաւ Դաւիթ-բէգի հզօր ձայնն ու մի րոպէից յետոյ ազատների գունդն ամրոցն էր մտնում, որի վրա նոյնպէս ծածանում էր արդէն հայկական դրօշակը...

Դաւիթ-բէգը հրամայեց ամրացնել Շէնչէրը: Պարսիաները նորոգւում էին, փորւում փոսեր, մղկիթի տեղ զերականգնում էր մատուռը տէրունական խաչը գլխին...

Ամէն կողմից Դաւիթ-բէգին օգնելու էին գալիս հայերը, երդուում, որ կ'կատարեն նրա ամէն մի հրամանը, որ կ'մեռնեն նրա հետ:

Եկաւ Զոբան-Թափւնին յիսուն զինւորուած հովիւ գլուխն հաւաքած:

Եյսպիսով՝ երկու շաբաթուայ ընթացքում չորս հազար ընտիր տղամարդիկ պատրաստ էին Դաւիթ-բէգի մի խօսքի հետ կոիւ գնած որին ամէնքը սպասում էին անհամբեր...

Ճեռու տեղերից աւելի ուրախ լուրեր էին հասնում: Զամնդուրի ու Գուրհամի Թորոս ու Պապ քաջ հայ իշխանները սաստիկ ջարդ էին տուել իրանց գաւառի թուրքերին ու գրաւել բոլոր կրծերը. նրանք գալիս էին Դաւիթ-բէգի հետ միանալու:

Ճալիձորցի Տէր-Աւետիքը մի կողմէր դրել խոչը, զցել Փարաջան ու ձեռքին սուր, զլիին փափախ՝ կրակէր տուելիր կողմի բոլոր թուրք գիւղերը. իր ծուխից կազմել էր մի գունդ ու շտապով գալիս էր Շէնչէր..

Ի՞յց թուրքերը գլաւել էին արդէն Շէնչէրի շըջականները, իրանց բոլոր ուժը կենդունացրել այդ տեղերում. գիտէին, որ Շէնչէրումն է Պարաբաղի յոյսը, Պարաբաղի նեհէրումն է Պարաբաղի յոյսը, Պարաբաղի նեհէրումն է Պարաբաղի յոյսը....

Երբ Գաւիթ-բէզը վերջնականապէս իմացաւ թշնամի զօրքերի թիւը, դիւքն ու միջոցները, յայտնեց իր գնդերին, որ հետեւեալ առաւօտ նրանց կուի է տանելու:

Եմբողջ գիշերն անցաւ լուռ. ոչ մի ձայն չէր լսւում հայ զօրքերի մէջ—ոչ աղմուկ, ոչ ծիծաղ...

Տաթեւի ծերունի հպիսկոպոսն օծեց հայկական դրօշակներն ու օրհնեց հայ զինւորներին....

Ձ.

.... Ու հասաւ առաւօտը, արիւնալի կուի առաւօտը: Գեռ արեւ չէր ոսկէզօծել Պարաբաղի գագաթները, գեռ առաւօտեան հովը չէր սօսափեցրել ծառերի տերևները, գեռ երգիչ թռչունները չէին աւետել արշալուսի բացուելը եղբ հայ զինւորներն արդէն սաքի վըա էին. հանդարա, անձայն, կարգով նրանք գնդերի էին բաժանւում. իւրաքանչիւր գնդապետ իրան յանձնած գնդի առաջն էր անցնում: Գաւիթ-

բէզը դեռ չէր դուրս եկել. նրան ամէնքը սպասում էին, ու ահա նա երևեցաւ: Հանդարա, վեհօրէն մօտենում էր զօրքերին:

Հայ զինւորները ցնծութիւնի աղաղակներով նրան ընդունեցին, նա նշան արեց, որ ուղղումէ խօսել և ահա տիրեց խորին լսութիւն.

«Խճ աւելորդ է ձեզ բացատրել, սիրելի եղբայրներ, թէ ինչի համար այսօր կուի ենք գնում: մենք փառքի համար չենք թողել մեր ընտանիքը, մեր կիսակործան աները... մենք գնում ենք նորից ձեռք բերելու այն աղատութիւնն ու անկախութիւնը, որը մեզնից խլել էին մեր թշնամիները. մենք գնում ենք վրէժինդիր լինելու մեր յափշտակիչներից: Մէնք քիչ ենք, թշնամիները շատ են, բայց տառապեաների Աստուած մեր կողմն է լինելու: Դուք զիտէք, որ երբ մարդուց խլում են նրա ամէնաթանկագին բանը, նրան յսւսահատութիւնի են հասցնում ու նա վճռում է ձեռք բերել նորից իր կորցրածը այն ժամանակ ոչ մի ուժ աշխարհիս վըա չի կարող նրան յաղթահարել...

«Եյսօր մենք գնում ենք նորից ձեռք բերելու մեջանից խլուածը, գնում ենք փրկելու մեր եղայրներին, մեր հայրենիքը, մեր փառաւոր եկեղեցին... Եւ Աստուած մի արասցէ, որ դատապարտեն մեզ մեր սերունդները թէ մենք անսրժան կերպով կատարեցինք մեր պարտականութիւնը... Աւելի լաւ է մենք բոլորս ել մեռնենք, քան տեսնենք մեր թշնամու յաղթութիւնը... Պէտք չուտով, եղայրներ, շտապենք կռւի դաշտը ու թող Լուսաւորչի Աջը հովանի լինի մեզ վրա»...

Եւ սկսաւ կոտորածը

Եյդ ամսվերը չեն, որ որոտեմ են երկնքում, այդ կայծակները չեն, որ փայլատակում են ամպերում,—այդ սրերն են, որ շառաջում են, այդ կայծերն են, որ թափում են սրերից...

Տնքում են լեռները, տնքում են հովիտները, գողում է երկիրն ու ցնծում են Արցախի ալւոր լեռները, որ նորից տեսնում են իրանց որդիերանց պատերազմը, լսում են հրացանների թնդիւնը, կռւի աղաղակները... Ով աւել Աստուած, դու օգնես մեզ:—

Երդէն արել կանգնած է բարձր երկնքում, արդէն նա վազուց նայում է կոտորածին, բայց ճակատամարտը դեռ շարունակւում է:

Ըսիւծների պէս կուռում են հայերը. թուրքերն յետ չեն քաշուում, զիանն չները որ եթէ յետ քաշուն էլ չեն տեսնելու Պարաբաղը...

Դաւիթթ-բէզը հոգէհան հրեշտակի պէս յարձակւում է թուրքերի ամէնախուռն շարքերի վրա. նրա գէմքը զարհուրելի է, նրա աչքերից կայծակներ են թափում:

Նրա երկայն մազերը ծածանում են օդում..

Փնտոռում է նա գլխաւոր շարագործին, թուրքերի հրամանատար Պիվանչելթ-բէզին, որն այնքան անմեղ զոհեր կորցրեց, որն այնքան հայկակն արիւն թափեց...

Երդէն արել թեքում է գէպի արևմուտք, արդէն լեռների ստուերները սկսել են երկարանալ արդէն շատ քաջեր ընկել են երկու կողմից, բայց պատերազմը դեռ շարունակւում է...

Կատաղած են մարդիկ, կատաղած են նժոյգները... Ընկածների տնկոցը, սրերի շառաչեւնը, հրացանների որոտը, ձիաների փնչոցը միանում

էին, ու Գարաբեղը լեռները նրանց խուլ արձագանդ էին տալիս...

Եւ ահա Գաւիթ-բէզը տեսաւ Թիվանշերբէզին.—

Խնչէս արծին ամպերի միջեց յարձակումէ իր որսի վրա, այնպէս Գաւիթ-բէզը յարձակուեց Թիվանշերբէզի վրա:

— Նէյ գեառուրօղին, գեառուր, սատակի՞ր շան պէս, զոռաց Թիվանշերբէզը տեսնելով Գաւիթ-բէզին, իմ սուրը վաղուց սպասումէ քեզ:

Ու նաէլ Գաւիթ-բէզի վրայարձակուեց.— Հանդիպեցան իրկու հերոսներն ու սկսուեց մենամարտը...

Եւ զլորուեցաւ չարագործի զլուխը բաղմատառապ երկրի վրա

«Ելլահ, ալլահ» զոռացին թուրքերը, տեսնելով իրանց հրամանատարի մահն ու կատաղաբար շրջապատեցին Գաւիթ-բէզին...

Ի՞այց չնիրհումնա—ինչպէս առիւծ պաշա-

պանուումէ, ինչպէս հնձած խոտ զլորուում են նրա շուրջ անհաւատները:

Ի՞այց տեսնումէ Գաւիթ-բէզը, որ թուրքերը հետզհետէ շատանում են, որ նրա ուժը հետզհետէ թուլանումէ ու վախը, վախը սուրբ գործի համար մտնումէ նրա սիրտը...

Ի՞այց ահա շփոթւում են թուրքերի շարքերը. նրանք անկարգ ցրւուում են: Ըստա տուեց երեսը Գաւիթ-բէզն ու տեսնումէ, որ գարանից շտապումէ Մխիթարի թարմ գունդը.—

Եյս գունդը սպասում էր պատերազմի վճռական ժամին:

Խնչէս գմոխիքի որդի, զարհուրելի՝ ինչպէս ինքը մահը, ինչպէս դև ալանումէ Ազայիլը կռւի դաշտն ու նրա յետելից հինգհարիւր ձիաւոր

Եւ չդիմացան թուրքերն ու վայրենի աղաղակներով փախուստի դարձան,

Փողերի ձայներով, բացած դրօշակներով դառնում են կռւից հայերն ամրոց և ուղղում

Աստծուն ջերմաղօթքներ յազթանակի համար.

• • • • •

ՎԵՐՉԱԲԱՆ.

Ենցաւ հինգ տարի: Երդէն ոչ մի թուրք
չկայ Դարաբաղում, ոչ մէկը նրանցից իր պիղծ
շնչով չէ կեղառում քրիստոնէական սուրբ
հողը...

Ճալիճորի ամրոցում առաւօտից հնչում
են զանգակները: Ինակիները տօնի հագուս-
տներով դուրս թափուեցան փողոցներն ու հրա-
պարակը...

Եկեղեցում հանգիստոր պատարագ կայ:

Դարձրանեում են ինկի՝ ու կողբուկի հետ
դէպի երկինք գոհութիւնի աղօթքներ հայրե-
նիքի աղառուելու համար...

Պատարագը վերջացաւ: Դաւիթթ-բէգը դուրս
եկաւ եկեղեցոց:
Մօտեցաւ նրան պարսիկների Թահմազ-Շա-

հի գեսպանը, չոգեց նրա առաջ ու կարդաց
բարձր ձայնով Շահի հրովարտակը:

Ճրովարտակում ասուած էր, որ Շահը հաս-
տատումէ Դաւիթթ-բէգին Դարաբաղի ու բո-
լոր նրա տիրած երկրների անկախ իշխան.

Եւ ինդրումէ ժողովուրդն ու խօսումէ իր
իշխանի վրա, իսկ աշուղները տարածում են
նրա գովքը աշխարհից աշխարհ։



բարդով առ հում այս պետք ըցնուին ի՞ն
ովհանական ի՞ն և խման ովհան
այս պետք է ու ովհանական և ովհանական
այս ովհանական և միջադիմական և մասնակ
մասն պատճեն պատճեն ծանչու այս պետք

ովհանական ովհանական մասնական և մասնակ
մասն պատճեն պատճեն ծանչու այս պետք

ԳԻՆԸ ՀԻՆգ ԿՈՊԵԿ Ե:

ՀՀ Ազգային գրադարան



NL0242265

